

նը, որ է այժմեան Ս. Աստուածածին եկեղեցւոյ դանուած վայրը:

Հաշուեմատեանէ մը, որ կ'պահուի մեր Առաջնորդարանի դիւանին մէջ, կ'հասկցուի թէ այդ սեղը մասամբ կ'պատկանէր Հրեաներուն, որոնք սինակոկ մը և քանի մը տուներ ունէին հոն, մասամբ Ղպտիներու պատրիարքարանին, որ տուն մը ունէր, իսկ մնացեալ մասը կ'երեւի թէ արմաւնաց էր, քովը ունենալով սնակ մը: — Տեղին համար ընդամէնը կը վճարուի 79641 դրուշ, իսկ շինուածանիւթի և շինողէքի համար, 487794 դրուշ. մինչ հանդանուակութենէն գոյացած հասոյթն էր 263606 դրուշ միայն, որմէ կ'հասկցուի թէ արտակարգ նուիրատուութիւններ կամ եկամուտներ եւս եղած են այդ դամարէն զատ:

Ենթութիւնը կ'ուարտի 1839 տարւոյ ընթացքին. Գարրիէլ, որ վարդապետ էր տակաւին, Սիս կ'ղրկուի, ուր Աջապահեան Միքայէլ Կաթողիկոսէ Եպիսկոպոս կը ձեւնադրուի նոյն տարւոյ Յունիսի 15-ին, և վերադառնալով Եգիպտոս, Դեկտ. 17-ին կ'կատարէ օծումը նորակառոյց եկեղեցիին, որ կ'կոչուի Ս. Աստուածածին:

Եգիպտոսոյ գաղութի նոր շրջանին այս առաջին սեփական եկեղեցին կ'դանուի Կէմալիէի ոստիկանական շրջանակին պատկանող Պէնի Սուրէյն փողոցին և Հարէթ Զուէլա կնիւթափողոցին կազմած անկիւնին մէջ, շուրջ 2800 մէթր տարածութեամբ տեղւոյ մը վրայ: Այս գետինին այժմեան սահմաններն են. արեւմուտքէն Պէնի Սուրէյնի փողոցը, որուն անմիջապէս եզերքը կ'կանգնին եկեղեցւոյ աւագ դրան առջևի փոքրիկ բակին պարիսպը և Առաջնորդարանի շէնքը, ներքևի ութ խանութներով. հարաւակողմն է միջանցքի ամբողջ երկայնքին, Միխալիս Քարաթոնիս յոյն սեփականութիւնը. արեւելքէն, սալարկուած միջակ բակ մը, որուն ներքևը մեծ մասամբ հին մեծ ջրամբարը կ'տարածուի, և որուն շուրջը կ'ընդունին Կիրակոս Եպիսկոպոսի օրով շինուած հիւրանոց-զպրատունը և հիւանդանոց-հոգևոտունը, որոնք այժմ կ'իսափուլ վիճակի մէջ են — իրենց ետեւն ունենալով մասամբ հրեայ հասարակութեան պատկանեալ տուներ, և մասամբ Մարկոս Մակրիս զպաիին սեփականութիւնը, և Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանին պատկանած տուն մը. իսկ հիւսիսակողմը Ս. Սարգսի հին փողոցը, Ղպտի Պատրիարքարանին